

Վորլդ Վիժն Հայաստան Երեխաների և չափահասների անվտանգության ապահովման և պաշտպանության կանոնակարգ		ՓԱՍՏԱԹՂԹ Ի ՀԱՄԱՐԸ՝	
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝	ՊԱՏԱՍԽԱՆԱ- ՏՎՈՒԹՅՈՒՆ՝ Երեխաների պաշտպանություն և մասնակցություն		
	Ուժի ՄԵՋ Է ՄՏԵԼ՝ 01/10/2022	ՎԵՐԱՆԱՅՄԱՆ ՀԱՄԱՐԸ՝ (փոխարինում է Երեխաների պաշտպանության չափորոշիչներին)	
ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ՝ հանրային			

**Վորլդ Վիժն Հայաստանի (ՎՎՀ) Երեխաների և չափահասների անվտանգության
ապահովման և պաշտպանության կանոնակարգ**

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ:

- Գործընկերության կառավարման այս կանոնակարգը հիմնված է Երեխաների բարեկեցության ապահովման գործընկերային քաղաքականության և Վարքի կանոնների վերաբերյալ գործընկերային քաղաքականության վրա:

Այս Կանոնակարգը հիմնավորված է ՎՎ-ի առաքելության ավելի լայն մանդատներով, մասնավորապես, Երեխաների պաշտպանության հարցում, որն ամրապնդում է համայնքային կարողություններն ու հզորացնում երեխաների պաշտպանությամբ զբաղվող տեղական և ազգային համակարգերը:

Այս կանոնակարգը փոխարինում և ներառում է 2000թ. հունվարին հաստատված (և 2012թ. ու 2016թ. թարմացված) Գործընկերության երեխաների պաշտպանության չափորոշիչները, ինչպես նաև 2011թ. մայիսին հաստատված Սոցիալական մեդիայում երեխաների պաշտպանության ժամանակավոր չափորոշիչները, որոնք ուղղված են չափահաս շահառուների չարաշահման տարբեր ձևերի, մասնավորապես, սեռական շահագործման ու չարաշահման (ՄՇՉ) կանխարգելմանը:

- Այս կանոնակարգը շարունակում է ընդգծել երեխաների յուրահատուկ խոցելիությունը և հատուկ պաշտպանության պահանջները, ինչպես նաև շեշտում է ՎՎ-ի ծրագրային ներկայության վայրերում բնակվող չափահասների չարաշահման տարբեր ձևերի, մասնավորապես, սեռական շահագործման ու չարաշահման (ՄՇՉ) կանխարգելման կարևորությունը: Սույն Կանոնակարգում ներառվել է Ճնողական խնամքից զուրկ երեխաների վերաբերյալ նախկին կանոնակարգը:

- Մեր ծառայության շրջանակում ընդգրկված համայնքներում բնակվող երեխաների և չափահասների անվտանգության ապահովումը հիմնարար նշանակություն ունի Վորլդ Վիժն Հայաստանի (ՎՎՀ) բոլոր գործողությունների, ծրագրերի և առաքելության ուղղությունների (օգնություն, զարգացում և շահերի պաշտպանություն) համար: Մեր բոլոր գործողությունների կիզակետում է մեր պարտավորությունը՝ նախ և առաջ չվնասել ցանկացած վայրում գտնվող երեխաներին և Վորլդ Վիժն Հայաստանի ծրագրային ներկայության վայրերում բնակվող չափահասներին: Մեր բոլոր գործողություններում և որոշումներում մենք առաջին հերթին առաջնորդվում ենք երեխաների լավագույն շահով:

Անվտանգության ապահովումը ներառում է ՎՎ աշխատակիցների կամ փոխկապակցված անձանց կողմից երեխաներին կամ ՎՎ-ի ծրագրային ներկայության վայրերում բնակվող չափահասներին պատճառած վնասի կամ չարաշահման կանխարգելումը, հաղորդումը և արձագանքումը:

- ՎՎՀ-ն պարտավորվում է շարունակաբար կատարելագործել անվտանգության ապահովմանն ուղղված իր ջանքերը, որոնց հիմքում ընկած է սեռական շահագործման և չարաշահման (ՍՇԶԿ), ինչպես նաև բռնության կամ վնասի այլ ձևերի կանխարգելումը: Մենք մերժում ենք ուժի, կարգավիճակի կամ վստահության դիրքի ցանկացած չարաշահում սեռական կամ այլ շահագործման որևէ նպատակով: Մենք ձգտում ենք կանխարգելմանն ուղղված մեր ջանքերի և վերապատրաստման ծրագրերի միջոցով վերացնել չարաշահման այս հիմնարար պատճառը:
- ՎՎՀ-ն գրոյական հանդուրժողականություն ունի աշխատակիցների կամ մեր աշխատանքի հետ փոխկապակցված այլ անձանց կողմից երեխաների կամ չափահասների նկատմամբ կիրառվող բռնության կամ չարաշահման, այդ թվում՝ սեռական ոտնձգության կամ չարաշահման միջադեպերի հանդեպ: ՎՎՀ-ն անհրաժեշտ գործողություններ է ձեռնարկում՝ չարաշահման ցանկացած կասկածելի կամ հայտնի դեպքին արձագանքելու համար: Դեպքերի արձագանքը հիմնվում է երեխայի կամ չափահաս տուժողի կարիքների վրա, և առաջնահերթություն է տրվում նրանց շահերին:

ՇՐՋԱՆԱԿԸ.

Սույն Կանոնակարգը տարածվում է ՎՎՀ-ի բոլոր աշխատակիցների, ուսնակների, կամավորների, տնօրենների խորհրդի/խորհրդատվական մարմնի անդամների, կապալառուների, գործընկերների, խորհրդատուների, ծառայություններ մատուցողների, այդ թվում՝ այցելուների, ինչպես նաև ՎՎՀ-ի հետ փոխկապակցված այլ անձանց վրա:

Այս Կանոնակարգի հիմքում ընկած է ամենուր բոլոր երեխաների, ինչպես նաև չափահասների պաշտպանությունը ՎՎՀ աշխատակիցների և փոխկապակցված անձանց կողմից հասցվող վնասից՝ որպես ՎՎՀ ծրագրային ներկայության մաս:

պարտականությունները

- 1.1 Անվտանգության ապահովման համատեքստավորված կանոնակարգի մշակումը. ՎՎՀ-ն համատեքստավորել է հետևյալ կանոնակարգը՝ ՎՎՀ ազգային գրասենյակի (ԱԳ) բոլոր պատասխանատու բաժինների հետ սերտ համագործակցությամբ: Այն համահունչ է Անվտանգության կառավարման գլոբալ կանոնակարգին և համապատասխանում է տեղական օրենսդրությանը¹: ՎՎՀ Անվտանգության ապահովման համատեքստավորված կանոնակարգի հաջորդ պարբերական թարմացումը կիրականացվի 2023թ-ի սեպտեմբերին:
- 1.2 ՎՎՀ-ի համապատասխան աշխատակիցները և փոխկապակցված անձինք. ՎՎՀ-ն իր բոլոր աշխատակիցներին, ուսնակներին, կամավորներին և Հոգաբարձուների խորհրդի/Խորհրդատու մարմնի և անդամներին հնարավորություն է տալիս հասկանալ և իրականացնել անվտանգության ապահովման հետ կապված իրենց պարտականություններն ու պարտավորությունները: Միևնույն ժամանակ, ՎՎՀ-ն համապատասխան չափորոշիչներ է կիրառում արտաքին կողմերի, այդ թվում՝ այցելուների, համայնքային կամավորների, կապալառուների, գործընկերների և կապալառուների ու գործընկերների հետ փոխկապակցված այլոց նկատմամբ՝ վերահսկելու ՎՎՀ աշխատանքներում նրանց ներգրավման արդյունքում անվտանգության ապահովման հետ կապված ռիսկերը: Հետայսու, բոլոր այն մարդիկ, ում վերաբերում է սույն կանոնակարգը ամբողջությամբ կամ մասնակիորեն (անմիջականորեն կամ պայմանագրային պայմանավորվածությունների միջոցով), համատեղ կկոչվեն «ՎՎՀ աշխատակիցներ և/կամ փոխկապակցված անձինք»:
- 1.3 Իրազեկություն. ՎՎՀ բոլոր աշխատակիցները, կամավորները, ուսնակները, տնօրենների խորհրդի և խորհրդատվական մարմնի անդամները հավաստագիր են ստորագրում այն մասին, որ իրենք գիտեն, հասկանում են և պատրաստ են հետևել ՎՎՀ Անվտանգության ապահովման կանոնակարգի դրույթներին: Ստորագրված հավաստագրերը պահվում են ստորև թվարկված համապատասխան բաժիններում:
- ՎՎՀ ՄԱՄ² բաժինը պատասխանատու է կադրային ֆայլերում բոլոր աշխատակիցների և ուսնակների կողմից ստորագրված հավաստագրերի պահպանման համար,
 - ՎՎՀ Ֆինանսական/Գնումների բաժինը պատասխանատու է բոլոր անհատական և կորպորատիվ պայմանագրերի պահպանման համար,
 - ՎՎՀ Ծրագրի տնօրենը պատասխանատու է Խորհրդատվական մարմնի փաստաթղթերի թղթապանակում Խորհրդատվական մարմնի անդամների կողմից ստորագրված հավաստագրերի պահպանման համար:
 - ՎՎՀ յուրաքանչյուր բաժնի կամ ՏԾ ղեկավարը պատասխանատու է կամավորների ֆայլերում իրենց կամավորների կողմից ստորագրված հավաստագրերի պահպանման համար:
- 1.4 Պայմանագրեր կապալառուների հետ. Կապալառուները, որոնք ներգրավված են այնպիսի աշխատանքներում, երբ նրանք կամ նրանց աշխատակիցները կամ ենթակապալառուները կարող են շփվել ՎՎՀ ծրագրերում ներգրավված երեխաների կամ չափահաս շահառուների հետ, կամ կարող են մուտք ունենալ նման երեխաների կամ չափահաս շահառուների

¹ ՀՀ Ընտանեկան օրենսգիրք, «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենք

² Մարդիկ եւ մշակույթ

անձնական տվյալներին, պարտավոր են հետևել ստորև ներկայացված անվտանգության ապահովման պահանջներին, և այս պահանջը պետք է ներառվի նաև ՎՎՀ-ի հետ կնքվող նրանց պայմանագրերում: Բացի դրանից, պայմանագրին պետք է կցվեն Անվտանգ վարքի կանոնները: Այս պահանջները կիրառելի են անկախ նրանից, արդյոք Կապալառու լճարվում է իր ծառայությունների համար, թե դրանք անվճար է մատուցում (“pro bono”), և անկախ պայմանագրի տևողությունից:

Պայմանագրի կատարման ընթացքում Կապալառու և նրա աշխատակիցները ապահովում են հետևյալը.

ա) Նրանց ցանկացած փոխգործակցություն ՎՎ-ի ծրագրային ներկայության վայրերում բնակվող չափահասների, երեխաների, կամ նման անձանց ճանաչելի անձնական տվյալների հետ համապատասխանում է ՎՎՀ-ի՝ պայմանագրին կցված Անվտանգ վարքի կանոններին և ՎՎՀ-ի կողմից սահմանված անվտանգության ցանկացած այլ համապատասխան պահանջներին,

բ) Ցանկացած երեխային կամ ՎՎՀ-ի ծրագրային ներկայության վայրերում բնակվող չափահասներին վնաս պատճառելու ցանկացած միջադեպ կամ նման վնասի ռիսկի առկայությունը անհապաղ հաղորդվում է ՎՎ-ին,

գ) Երեխաների կամ չափահաս շահառուների հետ առնչվող կամ նման անձանց անձնական տվյալներին մուտք ունեցող ցանկացած անձ ստուգվել է երեխաների դեմ կատարած հանցագործությունների կամ չափահասների նկատմամբ չարաշահման համար քրեական գործերի առկայության տեսանկյունից՝ օրենքով թույլատրվող չափով (որի ապացույցներն աշխատակիցը պետք է ներկայացնի ՎՎՀ-ին ըստ պահանջի),

դ) Նրանք մանկական աշխատուժ չեն օգտագործում, և

ե) Անվտանգության ապահովման հետ կապված այս պարտականությունները հստակ կհաղորդվեն և կընդունվեն բոլոր այն աշխատակիցների կողմից, որոնք կարող են առնչվել երեխաների կամ չափահաս շահառուների հետ, կամ կարող են մուտք ունենալ նման անձանց անձնական տվյալներին, և կփոխանցվեն նույն տեսքով բոլոր այն ենթակապալառուներին (եթե այդպիսիք կան), որոնք ներգրավված են Պայմանագրի իրականացման գործում: Սույն «ե» կետում գետեղված անձանց կհանձնվի ՎՎՀ Անվտանգ վարքի կանոնների և ՎՎՀ այլ պահանջների պատճենը (տպագիր կամ էլեկտրոնային տարբերակով). Նրանք կստորագրեն ստացման հավաստագիրը և այս կանոններին պարտադիր հետևելու համաձայնությունը:

1.5 Համաձայնագրեր գործընկեր կազմակերպությունների հետ. ՎՎՀ-ի ծրագրերում կամ ծրագրային գործունեության մեջ գործընկերներին ներգրավելիս ՎՎՀ-ն պետք է գնահատի տվյալ գործընկերոջ՝ անվտանգության ապահովման պարտականությունները կատարելու ունակությունը, այդ թվում՝ գործընկերոջ անվտանգության ապահովման կանոնակարգերը, ընթացակարգերը և դրանց իրականացումը: Այնուհետև ՎՎՀ-ն պետք է կամ (ա) հաստատի, կամ (բ) կարողությունների զարգացման ծրագիր մշակի և աջակցի գործընկերոջն անվտանգության ապահովման ավելի հզոր մեխանիզմների մշակման հարցում:

ա) Գործընկերոջ հետ համաձայնագրում (լինի դա «համաձայնագիր», «պայմանագիր», «ենթադրամաշնորհ», «Փոխըմբռնման հուշագիր» կամ որևէ այլ եզրույթ) հստակ նշվում է, որ մինչև գործընկերոջ կողմից ծրագրային որևէ աշխատանք սկսելը ՎՎՀ-ն պետք է

իրականացնի այս գնահատումը և, ըստ նպատակահարմարության, հաստատի կամ աջակցի գործընկերոջը:

բ) Գործընկերը կարող է համաձայնել ծրագրային գործունեության իրականացման ընթացքում հետևել ՎՎՀ-ի Անվտանգության ապահովման տեղական կանոնակարգին:

գ) Համաձայնագիրը պետք է ապահովի, որ գործընկեր կազմակերպության՝ ՎՎՀ-ի ծրագրում աշխատող ցանկացած աշխատակից ստուգվել է երեխաների դեմ կատարած հանցագործությունների կամ չափահասների նկատմամբ չարաշահման համար քրեական գործերի առկայության տեսանկյունից՝ օրենքով թույլատրվող չափով (որի ապացույցները պետք է ներկայացվեն ՎՎՀ-ին ըստ պահանջի),

1.6 Վերապատրաստում. ՎՎՀ-ի բոլոր աշխատակիցները, կամավորները, ուսնակները, տնօրենների խորհրդի/խորհրդատվական մարմնի անդամները, ինչպես նաև գործընկեր կազմակերպությունների աշխատակիցները կամ կամավորները, որոնք աշխատում են ՎՎՀ ծրագրերի շրջանակներում, աշխատանքային գործունեության կամ ՎՎՀ-ի հետ համագործակցության սկզբում Անվտանգության ապահովման վերաբերյալ դասընթացի են մասնակցում: Դրանից հետո ՎՎՀ-ի աշխատակիցներն ու կամավորները առնվազն երկու տարին մեկ անգամ ստանում են պարբերական թարմացումներ կամ մասնակցում են անվտանգության վերաբերյալ այլ դասընթացների: ՎՎՀ-ի Անվտանգության ապահովման պատասխանատուն այս նոր կանոնակարգի վերաբերյալ վերապատրաստում կիրականացնի բոլոր աշխատակիցների համար, ինչպես նաև Դասընթացավարների վերապատրաստում կանցկացնի ՏԾ մակարդակի բոլոր ԵՊ ներկայացուցիչների հետ, որոնք իրենց հերթին հետագայում դասընթացներ կիրականացնեն ՏԾ բոլոր նոր աշխատակիցների, կամավորների և գործընկերների համար:

1.7 Անվտանգության ապահովման աշխատակազմ. ՎՎՀ ԱԳ-ն նշանակել է Անվտանգության ապահովման պատասխանատու, որը կոչված է առաջնորդելու և ապահովելու այս Կանոնակարգի դրույթների իրականացումը: ԱԳ-ի Անվտանգության ապահովման պատասխանատուն ապահովում է բոլոր ծրագրերում Անվտանգության ապահովման կանոնակարգի ներառումն ու իրականացումը: Անվտանգության ապահովման խնդիրների լուծմանն ուղղված ջանքերը ոչ բավարար գնահատելու դեպքում պատասխանատուն իրավունք ունի անմիջականորեն դիմել Ծրագրի տնօրենին և ՎՎ Միջազգային գրասենյակի (ՎՎՄ) Անվտանգության ապահովման գծով տնօրենին: Բոլոր մակարդակների ՎՎՀ ղեկավարները պարտավոր են մշակել և աջակցել այնպիսի համակարգերին, որոնք անհրաժեշտ միջավայր կպահպանեն երեխաների և չափահասների սեռական շահագործումն և չարաշահումը կանխարգելելու և Անվտանգության ապահովման կանոնակարգի իրականացումը խթանելու համար: Ավելին, յուրաքանչյուր ՏԾ-ում պետք է նշանակվի ԵՊ պատասխանատու՝ ՏԾ մակարդակում այս կանոնակարգի իրականացումը վերահսկելու նպատակով:

2.0 Վարքի կանոններ

2.1 Անվտանգ վարքի կանոններ. ՎՎՀ-ի աշխատակիցներն ու փոխկապակցված անձինք այնպիսի վարք են դրսևորում, որն ուղղված է պաշտպանելու բոլոր երեխաներին ամենուր և ՎՎՀ-ի ծրագրային ներկայության վայրերում բնակվող չափահասներին, կանխելու սեռական շահագործումն ու չարաշահումը, ինչպես նաև կանխելու ցանկացած այլ կանխամտածված

կամ ոչ կանխամտածված վնաս այն մարդկանց նկատմամբ, ում ծառայում է կամ ում միջավայրում աշխատում է ՎՎՀ-ն:

ՎՎՀ-ի փոխկապակցված անձինք, որոնցից չի պահանջվում ստորագրել ՎՎՀ Անվտանգության ապահովման կանոնակարգն ամբողջությամբ, պետք է առնվազն գրավոր հաստատեն, որ ստացել և հասկացել են ՎՎՀ Անվտանգ վարքի այս կանոնները:

2.2 Վարքագծի կանոնները հիմնված են երեխաների, հակառակ սեռի ներկայացուցիչների և ծրագրերի իրականացման տարածքում բնակվող այլ չափահասների հետ շփման տեղական և մշակութային տեսակետից ընդունելի կանոնների վրա:

Ընդունելի վարքաձևեր. ՎՎՀ աշխատակիցները և փոխկապակցված անձինք.

ա) ստեղծում և պահպանում են այնպիսի միջավայր, որը կանխում է սեռական շահագործումը և չարաշահումը և նպաստում է այս Կանոնակարգի դրույթների իրականացմանը,

բ) զգույշ են երեխաների և ՎՎՀ-ի ծրագրային ներկայության վայրերում բնակվող չափահասների հետ իրենց գործածած լեզվի, գործողությունների և հարաբերությունների ընկալման և ստեղծվող տպավորության հարցում: Նրանց վարքագիծը, ներառյալ անձնական տիրույթում և թվային հարթակներում, ինչպես առցանց, այնպես էլ ցանցից դուրս, հարգանք է արտահայտում երեխաների և չափահասների ու նրանց իրավունքների նկատմամբ,

գ) հետևում են, որպեսզի երեխաների և ծրագրերի մասնակիցների հետ բոլոր ֆիզիկական և առցանց շփումները համապատասխանեն տեղի մշակույթին և տեղական օրենսդրությանը,

դ) դրական, ոչ բռնի մեթոդներ են կիրառում երեխաների վարքը կառավարելու համար,

ե) որպես կազմակերպության ներկայացուցիչ՝ պատասխանատվություն են կրում սեփական վարքի և գործողությունների համար,

զ) մշտապես հաշվետու են երեխայի վարքին իրենց արձագանքի համար, նույնիսկ երբ երեխան իրեն պահում է սեռական ոչ պատշաճ ձևով. չափահասները խուսափում են երեխաների հետ հարաբերություններում վարկաբեկող կամ խոցելի դիրքում հայտնվելուց,

է) հնարավորության և նպատակահարմարության դեպքում, ՎՎՀ-ի աշխատանքների իրականացման ընթացքում հետևում են «երկու չափահաս» կանոնին, երբ երեխաների ներգրավմամբ բոլոր գործողությունները վերահսկվում են երկու կամ ավելի չափահասների կողմից, որոնք մշտապես տեսանելի և ներկա են,

ը) ենթարկվում են անվտանգության ապահովման հետ կապված հետաքննության (ներքին և արտաքին) պահանջներին և տրամադրում են հետաքննության ամփոփման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը և այլ տեղեկությունները,

թ) երեխաների և ծրագրերի չափահաս մասնակիցների անձնական տվյալների հետ աշխատելիս պահպանում են տվյալների գաղտնիության մասին գործող օրենսդրության, ինչպես նաև ՎՎՀ-ի տվյալների գաղտնիության և տեղեկատվության անվտանգության կանոնակարգերի դրույթները, ներառյալ ՎՎՀ-ի՝ երեխաների թվային անվտանգության ապահովման կանոնակարգերը, և ապահովում նման տվյալների պահպանումն ու փոխանցումն անվտանգ, գաղտնի եղանակով,

ժ) ՎՎՀ աշխատակցի կամ փոխկապակցված անձի, կամ ցանկացած այլ գործակալության մարդասիրական օգնության աշխատակցի կողմից անվտանգության կամ սույն Կանոնակարգի դրույթների խախտման հետ կապված ցանկացած կասկածվող կամ փաստացի դեպք պետք է անմիջապես հաղորդվի հաղորդման գործող մեխանիզմների միջոցով (տե՛ս 6.5 Բաժինը հաղորդման եղանակների վերաբերյալ):

Անընդունելի վարքածներ. ՎՎՀ աշխատակիցներին և փոխկապակցված անձանց **արգելվում է.**

ա) ոչ պատշաճ ֆիզիկական վարք դրսևորել կամ սեռական հարաբերության մեջ մտնել երեխայի հետ (մինչև 18 տարեկան), անկախ տվյալ երկրում ընդունված իրավական համաձայնության կամ չափահասության տարիքից: Սա նաև ներառում է վերը նշված վարքագծին հավանություն տալը կամ հանդուրժելը (ներառյալ մինչև 18 տարեկան երեխայի ամուսնությունը խրախուսելը կամ հանդուրժելը) : Սա նաև ներառում է այնպիսի վարքագիծ, որը կարող է դիտվել որպես երեխայի նախապատրաստում հետագա ոչ պատշաճ հարաբերությանը:

բ) սեռական հարաբերություն փնտրել կամ նման հարաբերության մեջ մտնել ՎՎՀ-ի ծրագրային ներկայության վայրերում բնակվող ցանկացած չափահասի հետ: Ըստ էության, ուժի անհավասար դինամիկայի վրա հիմնված նման հարաբերությունները խաթարում են ՎՎՀ-ի մարդասիրական կամ զարգացման աշխատանքի հուսալիությունն ու ազնվությունը:

գ) սեռական շահագործում կամ չարաշահում իրականացնել ՎՎՀ-ի ծրագրային ներկայության վայրերում բնակվող ցանկացած չափահասի կամ ցանկացած երեխայի նկատմամբ:

դ) փող, աշխատանք, ապրանքներ կամ ծառայություններ փոխանակել սեռական հարաբերությունների (ներառյալ սեռական ծառայությունները, այլ նվաստացնող, ստորացնող կամ շահագործող վարքածները, կամ մարմնավաճառներին վարձելը) կամ այլ շահագործող պահանջների դիմաց: Սա ներառում է այնպիսի օգնության փոխանակումը, որն ի սկզբանե նախատեսված է ծրագրերի մասնակիցների համար:

ե) առանց ծնողների համաձայնության և իմացության ՎՎՀ ծրագրային տարածքի երեխայի հետ շփվել թվային հարթակների (օրինակ՝ Facebook կամ Twitter), բջջային տեխնոլոգիաների (օրինակ՝ տեքստային հաղորդագրություններ, WhatsApp, Skype) կամ առցանց գործիքների միջոցով: Բացի դրանից, ՎՎՀ աշխատակիցները կամ փոխկապակցված անձինք երեխաների կամ ծրագրերի չափահաս մասնակիցների հետ բջջային, թվային կամ առցանց հարթակներում երբեք չեն շփվում ոչ պատշաճ կամ սեռական բնույթի եղանակներով:

գ) գուրգուրել, բռնել, համբուրել, գրկել կամ հպվել որևէ երեխայի կամ ՎՎՀ-ի ծրագրային ներկայության վայրերում բնակվող չափահասներին ոչ պատշաճ կամ մշակութային տեսանկյունից անընդունելի կամ որևէ օրենսդրությանը հակասող եղանակներով,

ե) օգտագործել ոչ պատշաճ կամ վիրավորական խոսքեր երեխայի կամ ՎՎՀ-ի ծրագրային ներկայության վայրերում բնակվող չափահասների նկատմամբ, օրինակ, ամոթանք կամ նվաստացում առաջացնող, ստորադասող կամ ստորացնող խոսքեր,

ը) ավելորդ կամ անտեղի ժամանակ անցկացնել երեխայի կամ ծրագրերի չափահաս մասնակցի հետ մենակ, ուրիշներից հեռու կամ փակ դռների հետևում, կամ մեկուսացված տարածքում,

թ) հանդուրժել կամ մասնակցել այնպիսի վարվելակերպի, որն ապօրինի է, վտանգավոր կամ բռնի, ներառյալ վնասակար ավանդական սովորույթները, հոգևոր կամ ծիսական բռնության դեպքերը,

ժ) երեխաներին վարձել որպես մանկական աշխատուժ ցանկացած աշխատանք կատարելու համար (ներառյալ որպես «տնային աշխատողներ»), բացառությամբ այն դեպքերի, երբ դա բխում է երեխայի լավագույն շահից և համապատասխանում է տեղական օրենսդրությանը և միջազգային չափորոշիչներին («մանկական աշխատուժը» երեխայի համար հոգեկան, ֆիզիկական, սոցիալական կամ բարոյական վտանգ ներկայացնող կամ վնաս պատճառող կամ նրա դպրոցական ուսումնառությունը խաթարող աշխատանք է: Ի հակադրություն դրա, «մանկական աշխատանքը» կարող է օգտակար լինել, եթե դա թույլատրվում է Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) կոնվենցիաներով, և երեխայի շահերին նախապատվություն է տրվում չափահասների ստացած օգուտների նկատմամբ),

ի) հարվածել երեխային կամ այլ մարմնական պատիժ կիրառել երեխայի նկատմամբ այն ընթացքում, երբ երեխան ՎՎՀ-ի խնամքի տակ է գտնվում կամ ՎՎՀ աշխատակիցը կամ փոխկապակցված անձը ՎՎՀ գործունեություն է իրականացնում,

լ) ՎՎՀ աշխատանքի համար երեխային մեքենայով մենակ տեղափոխել, բացառությամբ այն դեպքերի, երբ դա բացարձակապես անհրաժեշտ է և արվում է ծնողի/խնամակալի և ղեկավարության համաձայնությամբ,

խ) սխալ կամ անզգույշ կերպով օգտագործել երեխաների կամ ծրագրերի չափահաս մասնակիցների անձնական տվյալները,

ծ) լռել, կոծկել կամ խթանել ՎՎՀ աշխատակցի կամ փոխկապակցված անձի կողմից անվտանգության խախտման որևէ փաստացի կամ կասկածվող դեպք կամ Անվտանգության ապահովման կանոնակարգի որևէ խախտում,

կ) փոխանակել ՎՎՀ ծրագրերում ներգրավվածությունը կամ օգուտները համայնքի անդամի կողմից որևէ տեսակի ծառայության հետ, քանի որ սա իշխանության չարաշահում է:

Վերոհիշյալ ցանկում կոնկրետ օրինակներ են զետեղված, սակայն այն սպառիչ չէ ու չի ներկայացնում սույն Կանոնակարգի խախտում պարունակող բոլոր վարքածնեքը:

2.3 Կարգապահական միջոցներ. Հետևյալը հիմք է հանդիսանում կարգապահական միջոցներ կիրառելու, ընդհուպ մինչև ՎՎՀ-ի հետ աշխատանքային պայմանագիրը կամ ցանկացած այլ կապը խզելու համար.

- ա) ՎՎՀ Անվտանգ վարքի կանոններին չհետևելը,
- բ) ՎՎՀ Անվտանգության ապահովման կանոնակարգի ցանկացած այլ դրույթներին չհետևելը,
- գ) երեխաների ու ՎՎՀ-ի ծրագրային ներկայության վայրերում բնակվող չափահասների նկատմամբ այլ անպատշաճ վարք դրսևորելը,
- դ) ՎՎՀ աշխատակցի կամ փոխկապակցված անձի կողմից կատարված վտանգավոր միջադեպի մասին տեղեկություններ ունենալու կամ կասկածելու դեպքում դրանք չհաղորդելը կամ
- ե) կանոնակարգի հնարավոր խախտման հետաքննությանը կամ տվյալ դեպքի ուսումնասիրությանը միջամտելը:

Սույն Կանոնակարգը խախտած անձանց կադրային ֆայլերում կարող է հայտնվել «Աշխատանքի չընդունել» գրությունը: Գործընկերների և կապալառուների դեպքում համապատասխան ֆայլերում կարող է հայտնվել «Չներգրավել աշխատանքում» գրությունը՝ կախված տվյալ դեպքի բնույթից:

3.0 Կադրերի հավաքագրում

3.1 Ստուգում: ՎՎՀ-ն ջանասիրաբար միջոցներ է ձեռնարկում՝ ստուգելու և բացահայտելու այն բոլոր մարդկանց, ովքեր կարող են փորձել օգտագործել ՎՎՀ-ն՝ երեխաներին կամ չափահաս շահառուներին վնաս պատճառելու համար, կամ որոնց անցյալի գործողությունները զգուշացնում են նման վնաս հասցնելու անընդունելի ռիսկի մասին:

- ա) Այս միջոցները ներառում են աշխատանքային հայտարարություններում³, հարցազրույցներում և երաշխավորությունների ստուգումների ընթացքում անվտանգության ապահովման թեմային անդրադարձ կատարելը: Անվտանգության տեսանկյունից թեկնածուների ստուգման միջոցառումները կիրառվում են աշխատանքի դիմած կամ տնօրենների խորհրդի/խորհրդատվական մարմնի անդամության համար դիտարկվող բոլոր թեկնածուների, կամավորների, ուսնակների և անհատ կապալառուների

³ ՎՎՀ-ի երեխաների և մեծահասակների անվտանգության ապահովման կանոնակարգի վերոհիշյալ պահանջներին հետևելու համար աշխատանքային հայտարարություն տարածելիս հայտարարության տեքստում, որտեղ հնարավոր է, պետք է կիրառվեն հետևյալ արտահայտությունները. «Վորլդ Վիժն Հայաստանը պարտավորվում է ապահովել երեխաների, երիտասարդների և չափահասների անվտանգությունը, և ակնկալում է, որ բոլոր աշխատակիցները, ուսնակները, կամավորները և փոխկապակցված անձինք կստանան նաև նույն հանձնառությունը: Մենք հավատում ենք, որ յուրաքանչյուր շահառու և այն համայնքների յուրաքանչյուր անդամ, որոնց հետ մենք աշխատում ենք, իրավունք ունի պաշտպանված լինել վնասի, չարաշահման, անտեսման, ոտնձգությունների և շահագործման բոլոր ձևերից՝ անկախ տարիքից, ռասայից, կրոնից և սեռից, կարգավիճակից՝ որպես հաշմանդամություն ունեցող անձ, կամ էթնիկ ծագումից: ՎՎՀ-ն ջանասիրաբար միջոցներ է ձեռնարկում՝ ստուգելու և բացահայտելու այն բոլոր մարդկանց, ովքեր կարող են փորձել օգտագործել ՎՎՀ-ն՝ երեխաներին կամ չափահաս շահառուներին վնաս պատճառելու համար, կամ որոնց անցյալի գործողությունները զգուշացնում են նման վնաս հասցնելու անընդունելի ռիսկի մասին: Հետևաբար, կադրերի հավաքագրման մեր քաղաքականությունը և ընթացակարգերը ներառում են նախորդ փորձի կամ մինչ ՎՎՀ-ի հետ համագործակցությունն ունեցած փորձի մանրամասն ստուգում, որպեսզի առավելագույնս ապահովվի անվտանգությունը»:

նկատմամբ, որոնք շփվելու են երեխաների կամ չափահաս շահառուների հետ կամ մուտք են ունենալու նրանց անձնական տվյալներին:

բ) Հարցազրույցի ընթացքում դիմորդներին հարցնում են երեխաների հետ իրենց նախորդ աշխատանքների մասին:

գ) Դիմորդների կողմից տրամադրված երաշխավորներին հարցեր են տրվում այն մասին, թե որքանով է թեկնածուն համապատասխանում խոցելի չափահասների և երեխաների հետ կամ երեխայակենտրոն գործակալությունում աշխատելու համար:

դ) Երաշխավորների հետ կապված տեղեկությունները փաստաթղթավորվում են:

ՎՎՀ-ն պարտավորվում է նաև հետևել խոշոր դոնորների կողմից տրվող դրամաշնորհների շրջանակներում ներկայացվող ստուգման (սքրինինգի) պահանջներին՝ ըստ դոնորների ներկայացրած համապատասխան դրամաշնորհների պայմանների և կանոնակարգերի:

3.2 Ինքնության և նախորդ փորձի ստուգում. Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը թույլ չի տալիս կազմակերպություններին աշխատողների անունից ոստիկանական ստուգումների տվյալներ ստանալ, միայն աշխատողը կարող է ոստիկանական ստուգում պահանջել: Ավելին, Անվտանգության ապահովման կանոնակարգի այս պահանջը հակասում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը: Հայաստանի Հանրապետության Կառավարության 20.05.2004թ. N 933-Ն որոշման 26-րդ կետի «գ» ենթակետը թույլ է տալիս տեղեկատվություն տրամադրել բացառապես ֆիզիկական անձին՝ իր խնդրանքի հիման վրա: «Անձնական տվյալների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի համաձայն, սրանք անձնական տվյալներ են, որոնք կարող են տրամադրվել միայն օրենքի հիման վրա, կամ եթե տրվում է համապատասխան համաձայնություն տվյալ անձի կողմից: Աշխատանքային օրենսգրքի 89-րդ հոդվածի 2-րդ կետը արգելում է գործատուին օրենքում կամ այլ իրավական ակտերում չնշված լրացուցիչ փաստաթղթեր պահանջել: Աշխատանքային օրենսգրքի 132-րդ հոդվածը աշխատողների անձնական տվյալների հավաքման ու օգտագործման լրացուցիչ սահմանափակումներ է սահմանում: Հավանական չի թվում, որ նախորդ փորձի ստուգումը կարող է համարվել պարտադիր պահանջ աշխատանքային նպատակների տեսանկյունից, ուստի ՎՎՀ-ն չի կարող ստիպել աշխատակիցներին նման տեղեկություններ ստանալ և տրամադրել, եթե նրանք որոշեն հրաժարվել դա անել կամավոր:

ՄՄ-ն աշխատանքի առաջարկ կանի վերջնական թեկնածուին, կբացատրի ՎՎՀ կանոնակարգի՝ ոստիկանական ստուգման հետ կապված դրույթները, և նոր աշխատակցին կխնդրի աշխատանքի անցնելուց հետո մեկ ամսվա ընթացքում ոստիկանական ստուգման արդյունքները ներկայացնել ՄՄ բաժին:

Կկազմվի ձևաթերթ, որտեղ ասվում է, որ աշխատողը հասկանում է ոստիկանական ստուգման հետ կապված պահանջները և համաձայն է/համաձայն չէ կամավոր ներկայացնել համապատասխան տվյալները: Եթե աշխատողը ստորագրի փաստաթուղթ, որում նշում է իր՝ ոստիկանական ստուգման տվյալներ ներկայացնելու անհամաձայնությունը, ապա այդ հանգամանքը հաշվի կառնվի փորձաշրջանում գտնվող աշխատակցի աշխատանքային ժամկետի հնարավոր երկարացման մասին որոշում կայացնելիս, սակայն ոստիկանական ստուգման տվյալներ ներկայացնելուց հրաժարվելը չի կարող հիմք հանդիսանալ փորձաշրջանի ընթացքում պայմանագրի խզման համար:

Ոստիկանական ստուգման տվյալներ կպահանջվեն ինչպես պայմանագրային աշխատողներից՝ ըստ վերոհիշյալ քայլերի, այնպես էլ ՄՄ բաժնի կողմից առաջադրված ծառայություններ մատուցողներից

(ծառայությունների մատուցման պայմանագրի հիման վրա աշխատողներից), աշխատանքի անցնելուց հետո մեկ ամսվա ընթացքում:

Ոստիկանական ստուգումից ազատված լինելու դեպքում, որն ուժի մեջ է մինչև 2025 թվականը, երեխաներին և խոցելի չափահասներին վնասից զերծ պահելու և պատշաճ ստուգում ապահովելու նպատակով ՎՎՀ-ն, ոստիկանական ստուգման փոխարեն, գործի կոնի հետևյալ այլընտրանքային ընթացակարգերը:

ա) Պատշաճ ստուգում ապահովելու և ռիսկերը նվազեցնելու նպատակով ՎՎՀ-ն կշարունակի պահանջել երեք երաշխավորություն նախորդ ղեկավարներից՝ ոստիկանության կամ Կառավարության կողմից տրվող վարքի նկարագրի փոխարեն: Երաշխավորներին, մասնավորապես, կխնդրեն գնահատել անձին երեխաների և խոցելի չափահասների հետ աշխատելու տեսանկյունից: Երաշխավորները պետք է նաև հաստատեն, որ չունեն տեղեկություն տվյալ անձի կողմից երեխաների չարաշահման կամ սեռական շահագործման կամ չափահասների դեմ բռնության որևէ միջադեպի մասին:

բ) Ուսնակները, կամավորները և ծառայություններ մատուցողները, խորհրդատվական մարմնի անդամները և թեկնածուները պետք է հայտարարություն ներկայացնեն առ այն, որ իրենք երբևէ բռնություն չեն գործել երեխաների և/կամ չափահասների նկատմամբ:

գ) Ողջ աշխատակազմը, բոլոր կամավորները, ուսնակները և խորհրդատվական մարմնի անդամները պետք է հավաստագիր ստորագրեն ՎՎՀ Երեխաների և չափահասների անվտանգության ապահովման կանոնակարգի և Վարքի կանոնակարգի ընդունման մասին:

դ) Բոլոր կապալառուները պետք է հավաստագիր ստորագրեն ՎՎՀ Անվտանգ վարքի կանոնակարգի ընդունման մասին:

ե) Բոլոր աշխատակիցները, կամավորները, ուսնակները և խորհրդատվական մարմնի անդամները անվտանգության ապահովման դասընթացի կմասնակցեն:

ՎՎՀ-ն աշխատանքի չի ընդունում կամ այլ կերպ չի համագործակցում երեխաների դեմ կատարված ցանկացած հանցագործության կամ չափահասների նկատմամբ սեռական շահագործման կամ չարաշահման համար նախկինում դատապարտված անձանց հետ, համապատասխան օրենքով թույլատրված սահմաններում, և ամեն դեպքում նման անձին հնարավորություն չի տալիս շփվել երեխաների և չափահաս շահառուների հետ կամ մուտք ունենալ նրանց անձնական տվյալներին:

4.0 Այցեր ՎՎՀ ծրագրեր

4.1 Այցերուններ. Սույն կանոնակարգին ենթակա այցելուների թվում են այն մարդիկ, որոնք այցելում են ՎՎՀ դաշտային ծրագրեր կամ հանդիպում են ՎՎՀ շահառու երեխայի/ների: Դրանց թվում են հովանավորները, դոնորները և օժանդակ գրասենյակների այլ պատվիրակությունները, ինչպիսիք են, օրինակ, ՎՎՀ-ի կողմից հրավիրված բլոգերները, հայտնի անձինք կամ լրագրողները: ՀՀ-ում գործող պետական պաշտոնյաներից կամ ինստիտուցիոնալ դոնորներից (կառավարություն, միջազգային) Չի պահանջվում անվտանգության ստուգում անցնել, սակայն նրանց պարտադիր ուղեկցում են ՎՎՀ աշխատակիցը/ները:

4.2 Այցի նախապատրաստում. Բոլոր հովանավորների և մասնավոր դոնորների, ինչպես նաև միջազգային այլ այցելուների այցերը նախապես հաստատվում են ինչպես ուղարկող, այնպես էլ հյուրընկալող գրասենյակի կողմից: Դաշտային ցանկացած այցելությունից առաջ օժանդակ և դաշտային գրասենյակները, Ազգային ռեսուրսների զարգացման ծրագրերի հետ միասին, օրենքի սահմաններում ուստիկանական ստուգում են անցկացնում այցելության պատրաստվող հավանական հովանավորների կամ դոնորների վերաբերյալ: Չի թույլատրվում չհայտարարված այցեր իրականացնել հովանավորյալ երեխաներին կամ ՎՎՀ ծրագրային համայնքներ:

4.3 Անվտանգության կողմնորոշում այցելուների համար. ՎՎՀ-ի յուրաքանչյուր բաժին ջանում է ապահովել այցելուների կողմից սույն կանոնակարգի համապատասխան բաժինների պահանջների պահպանումը: Հետևյալ պահանջները վերաբերում են այն այցելուներին, որոնք այցելում են ՎՎՀ ծրագրեր կամ անմիջական շփում են ունենում ՎՎՀ ծրագրային համայնքների անդամների հետ:

ա) Այցելուներ ՎՎՀ այլ գրասենյակներից, որոնք հանդիսանում են ՎՎՀ աշխատակիցներ կամ տնօրենների խորհրդի անդամներ. ՎՎՀ-ն հակիրճ կողմնորոշում է անցկացնում Անվտանգ վարքի կանոնակարգի այն առանձին դրույթների վերաբերյալ, որոնք կիրառելի են տվյալ համատեքստում, ինչպես նաև երեխաների հետ չափահասների փոխգործակցության տեղական սովորույթների վերաբերյալ:

բ) Այցելուներ, որոնք չեն հանդիսանում ՎՎՀ աշխատակիցներ կամ տնօրենների խորհրդի անդամներ. Նախքան այցը ուղարկող գրասենյակը բոլոր նման այցելուներին համառոտ ծանոթացնում է ՎՎՀ-ի Անվտանգ վարքի կանոնակարգի (Բաժին 2.1) և Հաղորդակցության ընթացքում վնասի կանխարգելման (Բաժին 5.4) դրույթների հետ: Ժամանակից հետո այցելուները հակիրճ գրավոր կամ բանավոր կողմնորոշում են անցնում և ստորագրում են կանոնների ստացման մասին հավաստագիր: Ստորագրված հավաստագրերը պահվում են ստորև ներկայացված ՎՎՀ համապատասխան բաժիններում:

- Վարչական բաժինը պատասխանատու է ՎՎՀ այլ գրասենյակներից այցելուների համար:
- Հովանավորությունների բաժինը պատասխանատու է միջազգային հովանավորների համար:
- Դրամաշնորհների և ծրագրերի ղեկավարները պատասխանատու են ծրագրային այցելուների համար:
- Հաղորդակցության բաժինը պատասխանատու է լրատվամիջոցների ներկայացուցիչների համար:
- Տեղական մարքեթինգի բաժինը պատասխանատու է անհատ դոնորների և կորպորատիվ ընկերությունների ներկայացուցիչների համար:
- ՎՎՀ աշխատակից կամ տնօրենների խորհրդի ներկայացուցիչ չհանդիսացող այցելուներին ծրագրեր այցելելու ընթացքում ուղեկցում են ՎՎՀ աշխատակիցները:

5.0 Հաղորդակցություն, բովանդակություն և մարքեթինգ

5.1 Արժանապատվություն. ՎՎՀ-ն ջանասիրաբար հետևում է, որպեսզի ցանկացած օբյեկտ լուսանկարելիս կամ տեսանկարահանելիս պահպանվեն անհատական պատկերի վերարտադրության հետ կապված տեղական սովորույթները և սահմանափակումները: ՎՎՀ-ն հետևում է, որպեսզի պատկերներն ազնվորեն ներկայացնեն համապատասխան համատեքստն ու փաստերը: Հաղորդակցության բոլոր ձևերում երեխաներին ու չափահասներին վերաբերվում և պատկերում են արժանապատվորեն, և ոչ որպես անօգնական

զոհերի կամ սեռական նշանակության դիրքերում:

5.2 Համաձայնություն. Երեխաները կամ չափահասները, ովքեր ՎՎՀ աշխատակիցների կողմից հավաքվող տեքստային, լուսանկարչական, տեսագրված, ձայնային ռեսուրսների և/կամ տվյալների անհատական սուբյեկտ են հանդիսանում, պետք է տեղեկացված համաձայնություն տան և իրավունք ունեն ցանկացած պահի ցանկացած պատճառով հրաժարվել համաձայնությունից: ՎՎՀ-ն պետք է կարողանա ցույց տալ, որ տեղեկացված համաձայնություն է տրամադրվել, ու նաև առկա համակարգեր ունենա, որոնք ՎՎՀ-ին թույլ են տալիս ցուցադրել, որ համաձայնությունից հրաժարվելու պահանջը բավարարվել է:

Տեղեկացված համաձայնությունը նշանակում է, որ անձն ընդհանուր պատկերացում ունի տվյալ բովանդակության նպատակի մասին և դրա հետ կապված բանավոր կամ գրավոր թույլտվություն է տալիս: Եթե տվյալների սուբյեկտ հանդիսացող անձը 16 տարեկանից ցածր երեխա է, տեղեկացված համաձայնություն պետք է ստանալ նաև ծնողից, խնամակալից կամ օրենքով սահմանված այլ մարմնից կամ անձից:

Հետևյալ իրավիճակներում բանավոր համաձայնությունն ընդունելի չէ, չափահասի կամ երեխայի օրինական խնամակալի կողմից պետք է ստանալ գրավոր համաձայնություն.

ա) նրանց կողմից ներկայացված անձնական տեղեկությունների կամ իրավիճակի զգայուն բնույթը կարող է վնաս պատճառել նրանց անձի գաղտնիությանը, արժանապատվությանը, անվտանգությանը կամ համբավին, կամ

բ) համապատասխան օրենքի պահանջի դեպքում:

5.3 Հաղորդակցության ընթացքում վնասի կանխարգելում. ՎՎՀ-ն ձգտում է պատմասացության միջոցով բարձրացնել իրազեկվածությունը և խթանել այնպիսի լուծումները, որոնք կօգնեն վերջ տալ երեխաների և չափահասների նկատմամբ բռնություններին և շահագործմանը: ՎՎՀ-ն ձեռնարկում է հետևյալ քայլերը՝ հաղորդակցության, բովանդակության հավաքման և մարքեթինգի (այդ թվում՝ թվային կամ անցանց լուսանկարների/տեսանյութերի/աուդիո հոլովակների, պատմությունների, հոդվածների կամ այլ հաղորդակցային նյութերի) միջոցով վնասները կանխարգելելու համար.

ա) Երեխաների և չափահասների անձնական տվյալները, որոնք հավաքվում, պահվում կամ ուղարկվում են էլեկտրոնային, առցանց կամ շարժական սարքերի միջոցով, պաշտպանվում են գաղտնաբառով: Բացի դրանից, տվյալները մշակվում են ըստ ՎՎՀ-ի՝ անձնական տվյալների անվտանգության ընթացիկ չափորոշիչների, որոնք կարող են ներառել ծածկագրում և այլ պահանջներ, ինչպես նաև օրենքի պահանջներ:

բ) ՎՎՀ-ն ապահովում է, որ անվտանգությանը վերաբերող համապատասխան պահանջները հստակ կերպով հաղորդվեն բոլոր աշխատակիցներին, հովանավորներին, մատակարարներին և գործընկերներին՝ լուսանկարներին, տեսանյութերին կամ տվյալներին մուտք ունենալու պահին, և տվյալ բովանդակության տարածումից հետո համապատասխան միջոցներ ձեռնարկվեն դրա՝ երեխաների համար անվտանգ օգտագործման համար:

գ) Հաշվի առնելով երեխաների առանձնահատուկ խոցելիությունը, սոցիալական մեղիայում կամ թվային տեխնոլոգիաներով տարածվող նյութում է միայն երեխայի անունը և երկիրը, չի նշվում երեխայի ազգանունը, հովանավորության նույնականացման համարը կամ երեխայի անհատական գտնվելու վայրը/հասցեն: Չգայուն թեմաների պարագայում, ինչպիսիք են, օրինակ, միայնակ երեխաները կամ մանկահասակ մարմնավաճառները, ՎՎՀ-ն թաքցնում է երեխայի ինքնությունը պատկերներում և կեղծանուն է օգտագործում:

դ) Երեխա կամ երեխաներ պատկերող նյութը կոնկրետ վայրի նշում չի պարունակում, եթե դրանում նշված է երեխայի անվան ցանկացած մասը: Ընդունելի այլընտրանք է երեխայի միայն անունը պարունակող լուսանկարներում նշել Տարածքային ծրագրի կամ ծրագրային գրասենյակի վայրը:

ե) ՎՎՀ-ն չի խրախուսում սոցիալական մեղիայով ուղիղ, չարտոնված, չհաստատված հաղորդակցությունը առանց ՎՎՀ-ի իմացության հետևյալ կողմերի միջև. հովանավորի/դոնորի/այցելուի և գրանցված/չգրանցված երեխաների միջև, ինչպես նաև ՎՎՀ աշխատակիցների/կամավորների/այլ փոխկապակցված անձանց և գրանցված/չգրանցված երեխաների միջև:

զ) ՎՎՀ-ի կողմից երեխաների և արտաքին կողմերի միջև խրախուսվող հաղորդակցության դեպքում վերահսկողության համապատասխան միջոցներ են ձեռնարկվում երեխաների անվտանգությունն ու բարեկեցությունը պաշտպանելու նպատակով:

է) ՎՎՀ-ն հաղորդման և արձագանքի տարբերակներ է ապահովում, որպեսզի հովանավորները, դոնորները, այցելուները, երեխաները կամ նրանց խնամակալները կարողանան հաղորդել ցանկացած միջադեպ(եր)ի մասին, որոնք կողմերից որևէ մեկին ստիպում են անհարմարություն կամ սպառնալիք զգալ: Հովանավորության փաթեթները, ՎՎՀ դոմենները, կայքերը և սոցիալական մեղիայի հարթակները երեխաների պաշտպանության վերաբերյալ մտահոգությունների կամ անվտանգությանն առնչվող միջադեպերի մասին հաղորդելու տարբերակներ են պարունակում:

ը) Արգելվում է մարքեթինգային կամ հաղորդակցական բովանդակություն տարածելու նպատակով օգտագործել այնպիսի հարթակներ, որտեղ հնարավոր չէ ստուգել տեղեկացված համաձայնության վկայությունը, և/կամ այնպիսի հարթակները, որտեղ հնարավոր չէ հրաժարվել համաձայնությունից: Գրասենյակների միջև կամ դոնորներին/արտաքին կողմերին բովանդակության տրամադրելու համար թույլատրվում է օգտվել միայն ՎՎՀ համաշխարհային կամ տեղական SS ծառայության կողմից ստուգված հարթակներից (օրինակ՝ Horizon, RMT, StoryHub և այլն):

6.0 Անվտանգության միջադեպեր և արձագանքման կանոններ

6.1 Անվտանգության միջադեպերին արձագանքելը. ՎՎՀ-ն կուսումնասիրի և կարձագանքի ՎՎՀ ծրագրերում երեխաների և չափահաս շահառուների նկատմամբ չարաշահման միջադեպերի մասին հաղորդումներին՝ տեղական օրենսդրության հետ համահունչ եղանակներով⁴: ՎՎՀ-ն

⁴ ՀՀ Կառավարության որոշում Միջգերատեսչական սոցիալական համագործակցության կանոնակարգի հաստատման մասին, ՀՀ Ընտանեկան օրենսգրքը, համապատասխան այլ օրենքներ

սահմանել է Անվտանգության միջադեպերի երեք մակարդակ, որոնց հիման վրա որոշում է ՎՎՀ արձագանքը՝ կախված միջադեպի լուրջությունից և ՎՎՀ դերից:

6.2 Մակարդակ 1. Երեխայի պաշտպանության համայնքային միջադեպեր. Երեխայի նկատմամբ չարաշահումը կամ վնաս պատճառելը այն համայնքում, որտեղ ՎՎՀ-ն ծրագրեր է իրականացնում, որը սակայն չի իրականացվել ՎՎՀ-ի աշխատակիցների կամ փոխկապակցված անձանց կողմից, համարվում է 1-ին մակարդակի միջադեպ: Եթե վնասը լուրջ է և սպառնում է երեխայի կյանքին, անվտանգությանը կամ զարգացմանը, ապա ՎՎՀ-ն 1-ին մակարդակի միջադեպը կգեկուցի ՎՎ միջազգային գրասենյակի Անվտանգության ապահովման բաժին: ՎՎՀ-ի Անվտանգության միջադեպերին պատրաստվածության պլանը հատուկ և գործնական ուղեցույցներ է տրամադրում այն պարտականությունների, գործողությունների և սահմանափակումների վերաբերյալ, որոնք համահունչ են Հայաստանի օրենսդրությանը և որոնց հիման վրա ՎՎՀ թիմն արձագանքում է 1-ին մակարդակի միջադեպերին:

6.3 2-րդ մակարդակի անվտանգության միջադեպեր. 2-րդ մակարդակի միջադեպերը սահմանվում են որպես սույն Կանոնակարգի ցանկացած խախտում, որը ցանկացած վայրում երեխաների կամ ՎՎՀ-ի ծրագրային ներկայության վայրերում բնակվող չափահասների համար հնարավոր վնասի անմիջական ռիսկ է ստեղծել, բայց որտեղ իրական վնաս չի պատճառվել: Միջադեպի մասին տեղեկություն ստանալուց հետո 24 ժամվա ընթացքում ՎՎՀ-ի Անվտանգության ապահովման պատասխանատուն 2-րդ մակարդակի միջադեպը գեկուցում է ՎՎ միջազգային գրասենյակի Անվտանգության ապահովման բաժին: Միջադեպին արձագանքն իրականացվում է ՎՎՀ-ի կողմից՝ ՎՎ միջազգային գրասենյակի Անվտանգության ապահովման գծով տնօրենի վերահսկողությամբ և հաշվետվողականությամբ և Անվտանգության տարածաշրջանային պատասխանատուի աջակցությամբ:

6.4 3-րդ մակարդակի անվտանգության միջադեպեր. 3-րդ մակարդակի միջադեպ է հանդիսանում ՎՎՀ աշխատակցի կամ փոխկապակցված անձի կողմից ցանկացած վայրում երեխայի կամ ՎՎՀ-ի ծրագրային ներկայության վայրերում բնակվող չափահասների նկատմամբ չարաշահման կամ վնաս պատճառելու հայտարարությունը կամ մեղադրանքը: Եթե միջադեպում երեխա է ներգրավված, ապա միջադեպերի ևս երկու հավելյալ տեսակներ են որակվում. երեխայի մահ կամ լուրջ վնասվածք՝ ՎՎՀ-ի կողմից կազմակերպված գործունեությանը մասնակցելու ընթացքում, կամ ուղղակիորեն պատճառված ՎՎՀ-ի հետ կապված անձի կողմից, և/կամ ՎՎՀ մեքենայով կամ ՎՎՀ-ի հետ կապված վարորդի մասնակցությամբ ճանապարհատրանսպորտային պատահար, որի ընթացքում երեխա է վիրավորվել կամ զոհվել: ՎՎՀ բաժինները փաստացի կամ ենթադրյալ 3-րդ մակարդակի դեպքերի մասին տեղեկություն ստանալուց հետո 24 ժամվա ընթացքում այդ մասին գեկուցում են ՎՎ միջազգային գրասենյակի Անվտանգության ապահովման բաժին: Միջադեպին արձագանքն իրականացվում է ՎՎՀ-ի կողմից՝ ՎՎ միջազգային գրասենյակի Անվտանգության ապահովման գծով տնօրենի վերահսկողությամբ և հաշվետվողականությամբ և Անվտանգության տարածաշրջանային պատասխանատուի աջակցությամբ:

6.5 Միջադեպերի մասին հաղորդում. ՎՎՀ-ի բոլոր աշխատակիցներն ու փոխկապակցված անձինք պատասխանատու են և պարտավոր են հաղորդել 2-րդ կամ 3-րդ մակարդակի միջադեպերի ցանկացած կասկածի մասին դրանք հայտնաբերելուց անմիջապես հետո:

Ինչպես նշված է 2.3 բաժնի (դ) կետում, ստորև ներկայացված մեխանիզմներից որևէ մեկի օգնությամբ չհաղորդելը սույն Կանոնակարգի խախտում է հանդիսանում և հիմք է ծառայում

կարգապահական միջոցների ձեռնարկման համար, ընդհուպ մինչև աշխատանքից հեռացում:

Բացի դրանից, ՎՎՀ-ից դուրս մարդասիրական ցանկացած աշխատողի կողմից սեռական չարաշահման կամ շահագործման վերաբերյալ ցանկացած հիմնավոր մտահոգության կամ կասկածի առկայության դեպքում այն նույնպես պետք է անմիջապես հաղորդվի: Միջգերատեսչական մեխանիզմների առկայության դեպքում դրանք պետք է օգտագործվեն դեպքի մասին հաղորդելու համար՝ խորհրդակցելով ՎՎՀ-ի Անվտանգության ապահովման բաժնի կամ պատասխանատուի հետ:

ՎՎՀ աշխատակիցները կամ փոխկապակցված անձինք հաղորդումներ կարող են ներկայացնել հետևյալ եղանակներով⁵.

ա) Հաղորդել անմիջական ղեկավարին կամ ՄՄ ղեկավարին

բ) Օգտագործել ՎՎ-ի Միջադեպերի կառավարման Ինտեգրված համակարգում (ՄԿԻ) հասանելի Միջադեպերի հաղորդման գաղտնի ձևաթերթը (միայն համապատասխան պատրաստվածություն ունեցողները կարող են հաղորդում ներկայացնել այս համակարգով). www.worldvisionincidentreport.ethicspoint.com

գ) Կապվել ՎՎՀ-ի Անվտանգության պատասխանատուի հետ՝ օգտագործելով ձեռնարկում ներկայացված զեկույցի ձևը (պատասխանատուն այնուհետև միջադեպը կհաղորդի ՄԿԻ համակարգի միջոցով՝ վերը նշված հղումով)

դ) Կապվել տարածաշրջանային պատասխանատուի հետ (որն այնուհետև հաղորդում կներկայացնի ՄԿԻ համակարգով)

ե) Կապվել ՎՎՀ-ի Անվտանգության ապահովման գծով տնօրենի կամ անվտանգության հարցերով խորհրդականի հետ (ով այնուհետև հաղորդում կներկայացնի ՄԿԻ համակարգով)

զ) Եթե պահանջվում է/սախընտրելի է տեղեկությունները գաղտնի պահել, կամ եթե վերը նշված տարբերակները որևէ պատճառով հասանելի չեն, օգտվել ՎՎՀ Անվտանգության և պաշտպանության թեժ գծից (հայտնի է նաև որպես Չանցանքների մասին հաղորդումների հավաքման թեժ գիծ). Հեռախոսահամարները և առցանց հաղորդման տարբերակները հասանելի են հետևյալ հղումով. <http://worldvision.ethicspoint.com>:

6.6 Ծանուցում անվտանգությանն առնչվող միջադեպերի մասին. ՎՎ միջազգային գրասենյակի անվտանգության ապահովման բաժինը տեղեկացնում է օժանդակ գրասենյակներին և միջազգային դոնորներին անվտանգությանն առնչվող միջադեպերի մասին՝ ըստ պայմանագրային պարտավորությունների և կանոնակարգային պահանջների: Բացի դրանից, օժանդակ գրասենյակները կարող են ծանուցվել, եթե որևէ միջադեպ վարկաբեկող հնարավոր խնդիրներ առաջացնի:

⁵ Օրենքով սահմանված դեպքերում աշխատակիցները պարտավոր են տեղյակ պահել օրինապահ մարմիններին կամ համապատասխան այլ պետական մարմին:

ա) ՎՎ անվտանգության ապահովման միջազգային բաժինը կարող է պատճենը տրամադրել դաշտային գրասենյակին՝ նպատակահարմարության դեպքում տեղական դոկորների գրասենյակներին ծանուցելու նպատակով:

բ) «անհրաժեշտ տեղեկացվածության» սկզբունքի համաձայն, այս ծանուցումները տուժածների, վկաների կամ բողոքի սուբյեկտ հանդիսացող անձանց ինքնությանը վերաբերող որևէ տեղեկություն չեն պարունակում:

գ) միայն բազային տեղեկություններ են տրամադրվում, որպեսզի ա) ապահովվի միջադեպում ներգրավված անձանց գաղտնիությունն ու անվտանգությունը և բ) երաշխավորվի ՎՎ-ի կողմից դեպքի պատշաճ կառավարումը:

